# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

# ՀՐԱՄԱՆ № 110

«28» 11 2022թ. ք. Երևան

## ՀԱՆՁՆՈՒՄ-ԸՆԴՈՒՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Պետրոս Վարդանի Մարտիրոսյանին Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների դատախազի պաշտոնին փոխադրելու և ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ ազգային անվտանգության ծառայությունում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետի տեղակալ Արամ Էռնեստի Արամյանին Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազի պաշտոնին փոխադրելու մասին Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2022 թվականի նոյեմբերի 23-ի N 450-Ա և N 451-Ա հրամանները և այն, որ անհրաժեշտ է կատարել Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազության վարույթների, փաստաթղթերի և գույքի հանձնում-ընդունում, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով և 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

## Հրամայում եմ՝

1. Կատարել Պ.Մարտիրոսյանի կողմից՝ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազության վարույթների, փաստաթղթերի և գույքի հանձնում, իսկ Ա.Արամյանի կողմից՝ ընդունում, որի համար ստեղծել հանձնախումբ՝ հետևյալ կազմով.

***Հանձնախմբի ղեկավար՝***

Մանասյան Անահիտ - ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ,

***Հանձնախմբի անդամներ՝***

| | |
|---|---|
| Պողոսյան Տիգրան - | Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազի տեղակալ, |
| Մարտիրոսյան Հայկ - | ՀՀ դատախազության ֆինանսատնտեսական վարչության պետ, |
| Նազարեթյան Արմինե - | ՀՀ դատախազության արխիվի բաժնի պետ, |
| Ղահրամանյան Մարուշ - | ՀՀ դատախազության ընդհանուր բաժնի պետի պաշտոնակատար, |
| Գևորգյան Թամարա - | ՀՀ դատախազության առաջին բաժնի պետի պաշտոնակատար, |
| Ենգիբարյան Դիաննա - | Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազության տարածքային բաժնի պետ: |

2. Հանձնախմբի ղեկավարին՝ հանձնման-ընդունման ակտի մեկ օրինակը Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչություն ներկայացնել մինչև 2022 թվականի դեկտեմբերի 12-ը:

**Ա.ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ**